



ԹԱԳԱՒՈՐԸ ԵՒ ՕՁԸ

Վարդան Արեւելցի

ԱՄԵՆԱՄԵԾ ՉԵՌԱԳԻՐ ՄԱՏԵԱՆԸ

Մեզի հասած ամենամեծ ձեռագիրը «Մշոյ ճառընտիր» անունով ծանօթ է աշխարհին: Կը կոչուի նաեւ «Տօնական»: Մագաղաթեայ գիրքը պատրաստուած է 660 հորթի կաշիէ: «Մշոյ ճառընտիրը» 32 քլ. կը կշռէ առանց կողքի: Հիացմունք կը պատճառեն անոր երկսիւնակ միջին մետրոպեան երկաթագիր գիրերը եւ հարուստ մանրանկարչութիւնը: Գիրքը ընդօրինակուած է (1200-1202) թուականներուն, Երզնկայի Աւագ վանքին մէջ: Գրիչը եղած է Վարդան Կարնեցի, իսկ ծաղկողը՝ Ստեփանոս: Գիրքին չափն է 55,3 x 70,5 սմ.: Գիրքին պատուիրատուն եղած է Բաբերդ քաղաքի տանուտեր Աստուածատուր անունով մարդ մը:

1202-ին կը յափշտակուի Բաբերդի այլազգի դատաւորին կողմէ, երկու տարի ետք կը վաճառուի Մշոյ Առաքելոց վանքին 4000 արծաթ դրամով, որ կը հաւաքուի շրջակայքի բնակիչներու եւ միաբաններու միջոցներով: Գիրքի ազատագրութեան համար եղած հանգանակութիւնը ցնցիչ դրուագներ ունի:



Թագաւոր մը, օճ մը ունէր, որ իրեն ամէն օր ոսկի դահեկան մը կը բերէր:

Թագաւորը մանուկ մը ունեցաւ: Օճն ու մանուկը միասին կը խաղային: Անգամ մը մանուկը սուրը հանեց, կտրեց օճին պոչը եւ գետին նետեց: Օճը զայրացաւ, խայթեց մանուկը եւ գնաց օտար երկիր:

Երբ թագաւորը եկաւ եւ տեսաւ զաւկին դիակն ու օճին պոչը, հասկցաւ ամէն բան: Ան սգաց զաւակը ու տարաւ թաղեց գերեզմանոց:

Անցաւ ժամանակ: Թագաւորը մարդ ուղարկեց օճին մօտ եւ ըսաւ.

-Ինչ որ եղաւ՝ եղաւ. ի գուր գացիր: Եկո՛ւր միասին ապրիկը եւ մենք առաջուան պէս իրարու հետ սիրով ըլլանք:

Օճը պատասխանեց.

-Այդպէս չէ, քանի որ ես պիտի նայիմ իմ պոչիս, իսկ դուն քու զաւկիդ գերեզմանին. ուրեմն մեր միջեւ թշնամութիւնը պիտի չվերանայ: Լաւն այն է, որ դուն եւ ես իրարմէ հեռանանք, որպէսզի ուրիշ չարիք չծնի մեր մէջ:



ԹԻՒՆ ՊԱՏՐԱՍՏԵՃ՝ ՈՒՌԱՆ ԿԱՐՆԵԱՆ-ՏԻՐՈՒՔԵԱՆ
ՆԿԱՐԱՉԱՐՈՒՅԵՃ՝ ՈՒՅՅԻ ՔԵՇՈՒՅԵԱՆ

ԾԱՆՕԹԱՆԱՆ-Բ ԱՇԽԱՐՀԻ ԱՄԷՆԷՆ ԾԵՐ ՈՂՆԱՇԱՐՄՈՐ ԱՆԱՍՈՒՆԻՆ


Ան իր երեք հարիր ինստուներկու մոմերը մարեց: Ան Կրինլանտի շանաձուկերեն մեկն է, անոր գիտական անունը սոմնիսուս մեքրոստեֆալուս է:

Այս շանաձուկի տեսակը կ'ապրի Արքթիքի շատ խոր "200-400" մետր խորությւն եւ շատ պաղ 2-7 աստիճան ջուրերուն մէջ: Իր ինը հարիր քիւններով եւ հինգ մեթր երկայնքով այս «Մեծ հայրիկը» մեր մոլորակին ամենէն մեծ շանաձուկերեն մեկն է: Ան շատ դժուարահաճ է իր ուտելիքին վերաբերմամբ օձաձուկ, կետ, փոկ, եքինոս, խեչափառ, տարբեր տեսակի ձուկեր... Ան կ'ուտէ գրեթէ ամեն ինչ, որ կը գտնէ:

Սակայն գիտէի՞ր, որ այս մեծ ձուկը ունի շատ հաւատարիմ ընկեր մը: Կրինլանտի գրեթէ բոլոր շանաձուկերը ունին մակաբոյծ մը, որ կը հաստատուի անոնց աչքերուն վրայ, ան քոփեփոտն է: Ժամանակի ընթացքին այս յարաբերութիւնը վնասակար կը դառնայ շանաձուկին համար. Ան կը վնասէ շանաձուկին աչքերը եւ զայն կը կուրցնէ բարեբախտաբար ջուրերուն խորերը՝ շատ լոյս չկայ, հետեւաբար շանաձուկը այս տեսողութեան պակասը կը փոխարինէ իր միւս զգայարաններով՝ լսողութիւն, հոտառութիւն... տեղափոխուելու եւ որսալու համար:




2



Կրնա՞ս գտնել պատկերին մէջ պահուած ութը տուրմէ հակիթները:

Կրնա՞ս գտնել իրարու նմանող երկու կատուները:

Կրնա՞ս ամբողջացնել թիւերու բուրգը՝ գիտնալով, որ իւրաքանչիւր շրջանակի մէջի թիւը հաւասար է անոր տակը գտնուող երկու թիւերուն գումարին:
Օրինակի համար՝ $15+6=21$



ԵՐԱՆՏԱԳԻՏ ԿԵՆՌԱՆԻՆԵՐԸ

Ժամանակին փայտահատ մը, հազի անտառ հասած, «օգնութիւն» կանչող խուլ ձայն մը լսեց: Ձայնին ուղղութեամբ առաջացաւ եւ ինքզինք գտաւ խոր ու մութ փոսի մը առջեւ:

-Օգնութիւն,- կ'աղերսեր ձայնը,- ան-

հատնում հարստութեանս կեսը հալալ կ'ընեմ անոր, որ զիս ազատէ:

Փայտահատը անմիջապէս մէջքի պարանը քակեց ու ցած նետելով կանչեց.

-Անհո՛գ եղիր, բարեկա՛մ, պարանին ծայրը պինդ բռնէ ու ինծի ապաւինէ:

Այս ըսելով ամբողջ ուժով քաշեց: Մէկէն օձ մը նետուեցաւ փոսէն դուրս եւ ակնթարթի մը մէջ անհետացաւ: Մարդը սարսափահար մէկ կողմ քաշուեցաւ, սակայն օգնութեան աղաղակները շարունակուեցան:

-Ամա՛ն, ամբողջ կարաւան մը՝ քառասուն ուղտի բեռ մետաքս ու ապրշում հալալ կ'ընեմ անոր, որ զիս ազատէ:

Գիւղացին սիրտը պնդացուց, զգուշաւոր քայլերով մօտեցաւ փոսին, պարանը երկրորդ անգամ ըլլալով վար նետեց ու ամբողջ ուժով քաշեց: Այս անգամ կապիկ մը վեր դուրս ցատկեց ու իսկոյն կորսուեցաւ: Գիւղացին շմաժ՝ մէկ կողմ կծկուեցաւ, սակայն օգնութեան կանչերը աւելի՛ աղեկտուր դարձան:

-Ամա՛ն, շնչահեղձ եղայ, կալուածներուս կեսը հալալ կ'ընեմ անոր, որ զիս ազատէ:

Գիւղացին երեսը խաչակնքեց, իրեն ծանօթ սուրբերը օգնութեան կանչեց ու պարանը երրորդ անգամ ըլլալով վար նետեց: Սակայն այս անգամ ալ առիւծ մը մոնչելով դուրս խոյացաւ ու արագօրէն հեռացաւ: Փայտահատը ծառ մը մագլցեցաւ ու այլեւս չհամարձակեցաւ վար իջնել, մինչդէռ փոսին խորերէն եկող ձայնը հետզհետէ աւելի մեծ խոստումներ կ'ընէր:

-Օգնութիւն: Չիս փրկողը մինչեւ մահ հանգիստ ու երջանիկ պիտի ապրի: Ափ ու չափ չունեցող հարստութեանս կեսը իրեն հալալ կ'ընեմ:

Օրուան հացի կարօտ, բազմանդամ ընտանիքի տեր փայտահատը չդիմացաւ, ծառէն իջաւ ու չորրորդ անգամ ըլլալով պարանը վար ձգեց: Այս անգամ միջին տարիքի, իշխանական հագուստ կապուստով մարդ մը երեսաց փոսին բերանը, տարօրինակ նայուածքով դիտեց իր ազատարարը, ապա, լայն շունչ քաշելով, շտապ քայլերով հեռացաւ: Գիւղացին շքեղ հագուստ-կապուստէն անքան տպաւորուեցաւ, որ մտքէն իսկ չանցուց իր փրկած մարդուն տուած խոստումներ չիշեցնել, գէթ ուր բնակիլը հարցնել:

Յաջորդ օր մութնուլոյսին, փայտահատը կը պատրաստուէր գործին երթալու, երբ յանկարծ օձ մը, կապիկ մը եւ առիւծ մը յայտնուեցան:

-Բարի մարդ,- լեզու ելաւ օձը՝ բերնէն անդին քար մը ձգելով,- զիս լոյս աշխարհի հանելուդ համար, մէկ օրդ հազար ըլայ, հոգ ու ցաւ չունենաս:

Կապիկը ուսէն փայտէ շալակ մը վար առաւ ու իր կարգին մաղթեց.

-Բարիքներն ու օրհնութիւնը տունէդ անպակաս ըլլան:

Իսկ առիւծը քառասուն ոչխար առաջ քշելով աւելցուց.

-Յոյ բռնես՝ ոսկի դառնայ:

Գիւղացին խորապէս զգացուեցաւ. որո՞ւ միտքէն կ'անցնէր, որ կենդանիները բարիքը չեն մոռնար եւ երախտագիտութեան իրենց պարտքը կը կատարեն:

Շարունակելի



ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏ

Տիգրանակերտը կառուցուած է Մեծն Տիգրան Բ.-ի օրով: Տարբեր ժամանակներուն քաղաքը ունեցած է զանազան անուններ ինչպէս՝ Մարտիրոսուպոլիս, Մուսֆարկին, Նփրկերտ եւ այլն:

Հայաստանի հռչակաւոր մայրաքաղաք Տիգրանակերտը մինչեւ Պոմպեոսի հետ կնքած հաշտութիւնը, կը գտնուէր Սիլվանի մէջ՝ Թուրքիա:

Տիգրանակերտի բնակչութիւնը միատար չէր: Բնակչութեան մեծ մասը հայեր էին: Այնտեղ կը բնակէին նաեւ հրեաներ, յոյներ եւ ասորիներ:

Տիգրանակերտցիները նշանաւոր են իրենց համեղ ճաշերով ինչպէս դաւորմա, թանապուր եւ այլն:

Ձմրան Տիգրանակերտը սաստիկ կը ցրտէ, ժողովուրդը տուներէն դուրս չ'ելլէր թոնիրին շուրջը հաւաքուելով իր օրերը կ'անցընէ: Այդ օրերուն դաւորման կը պատրաստէին ու կը պահէին կուծերու մէջ:

Տիգրանակերտցիները կենսուրախ եւ հիւրասէր մարդիկ են՝ խրախճանքները, շուրջպարերը եւ իրենց ձեռքով պատրաստուած համեղ գինին անպակաս եղած են տիգրանակերտցիին առօրեայէն:



ԼՍԱԾ ԷՔ ՄԱՆՏԱԼԱՆԵՐՈՒՆ ՄԱՍԻՆ

Մանտալա բառը եկած է սանսկրիտ լեզուէն՝ Հնդկաստանի օրինեալ լեզուն, եւ կը նշանակէ՝ «շրջանակ», «գունդ», «միջավայր» եւ «համայնք»: Մէկ բառ՝ տարբեր գաղափարներու համար:

Ուրեմն՝ մանտալաները եկած են Հնդկաստանէն: Սկզբնական շրջանին, անոնք կը ծառայէին մարդոց միտքը զբաղեցնելու կեանքի փոքրիկ հարցերով: Պուտտայականներուն համար / այս կրօնը ծնած է Հնդկաստանի մէջ, Ք.ա. 5-րդ դար, ան միջոց մըն է կեդրոնանալու կրօնին վրայ:

Սակայն ներկայիս մանտալաները անպայմանօրէն կրօնի մը հետ չեն կապուած. Անոնք նոյնիսկ կը գործածուին բժիշկներուն կողմէ՝ զբաղեցնելու համար այն հիւանդները, որոնք լաւ տրամադրութեան մէջ չեն գտնուիր: Անոնք կը հայթայթեն հանդարտութեան եւ հանգիստի զգացում մը:

Մանտալա գծելով առիթ կ'ունենանք մեր երեւակայութիւնը աշխատցնելով՝ ստեղծագործ դառնալ:

Թուղթը եւ մատիտդ պատրա՞ստ են: Մատիտիդ ծայրը դիր թուղթին կեդրոնը եւ սկսէ քու անձնական մանտալադ ստեղծելու այդ կեդրոնին շուրջը դառնալով եւ գծելով քու երեւակայած ձեւերդ մէկը:

